Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
մայիսի 29-ի N 669 - Ն որոշման

Կ Ա Ր Գ ՈՒ Հ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Հ Ն Ե Ր

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) հավատարմագրման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Կազմակերպության հավատարմագրումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ լիազորված պետական մարմին)՝ սույն կարգի պահանջներին համապատասխան:

3. Անկախ կազմակերպաիրավական ձևից՝ կազմակերպության հավատարմագրումը պարտադիր է:

4. Կազմակերպության հավատարմագրումը հավաստվում է վկայականով (այսուհետ՝ վկայական) և հավատարմագրման գրանցամատյանում գրանցումով:

5. Կազմակերպության հավատարմագրման գործընթացն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ստեղծվում է մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող կազմակերպությունների հավատարմագրման մասնագիտական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) և հաստատվում դրա աշխատակարգն ու անհատական կազմը:

6. Հանձնաժողովը կազմված է տասներեք անդամից, որում ընդգրկված են արվեստաբաններ (առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային

փորձով), ներկայացուցիչներ՝ գիտական կազմակերպություններից, թանգարաններից և լիազորված պետական մարմնից:

7. Հանձնաժողովն իրավասու է քննարկել սույն կարգի համաձայն իրեն ներկայացված փաստաթղթերը և տրամադրել եզրակացություն կազմակերպությանը վկայական տալու, մերժելու կամ վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ:

2. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

8. Կազմակերպությունը պարտավոր է՝

1) ապահովել մշակութային արժեքների փորձաքննության իրականացումը միայն լիազորված պետական մարմնի կողմից հավատարմագրված մշակութային արժեքների փորձաքննություն անցկացնող մասնագետների կողմից.

2) իրականացնել և հաստատել մշակութային արժեքների փորձաքննությունը Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Մշակութային արժեքների արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության անցկացման կարգը և չափորոշիչները հաստատելու մասին» N 630-Ն որոշման պահանջներին համապատասխան:

9. Կազմակերպությունը պետք է ապահովված լինի մշակութային առարկաների պահպանության համար անհրաժեշտ ջերմախոնավային ռեժիմով (օդի ջերմաստիճանը՝ 18+/-1 աստիճան C, օդի հարաբերական խոնավությունը՝ 55% +/-5%) և անվտանգության համակարգով պահպանվող հետևյալ առանձնացված տարածքներով՝

1) փորձաքննության ներկայացված մշակութային առարկաների ժամանակավոր պահպանության տարածքով.

2) անձնակազմի աշխատանքների կազմակերպման և փաստաթղթերի պահպանման համար տարածքով.

3) մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնելու համար համապատասխան նյութատեխնիկական միջոցներով (նյութակազմը վերլուծող սարքավորում, շարժական ֆլուորեսցենտ-ռենտգենային սարք, ինֆրակարմիր

ռենտգենային օպտիկական սարք, բինոկուլյար միկրոսկոպ, բևեռացնող միկրոսկոպ) հագեցված տարածքով:

3. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ ԵՎ ԴՐԱ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

10. Կազմակերպության հավատարմագրման համար հայտ կարող են ներկայացնել իրավաբանական անձինք (այսուհետ՝ հավակնորդ)՝ անկախ կազմակերպաիրավական ձևից:

11. Հավատարմագրման համար հավակնորդը էլեկտրոնային (Լիազորված պետական մարմնի էլեկտրոնային հասցեի կամ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով) կամ թղթային եղանակով դիմում է նախարարին՝ կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) կազմակերպության պետական գրանցման վկայականի և հաստատված կանոնադրության պատճենները.

2) տեղեկատվություն կազմակերպության գործունեության իրականացման համար սույն կարգի 9-րդ կետով պահանջվող տարածքների տնօրինման, տիրապետման կամ օգտագործման մասին (վարձակալության պայմանագրի, սեփականության վկայականի պատճենները).

3) լուսանկարներ առանձնացված տարածքների և նյութատեխնիկական միջոցների վերաբերյալ.

4) տեղեկատվություն լիազորված պետական մարմնի կողմից հավատարմագրված մշակութային արժեքների փորձաքննություն իրականացնող և համապատասխան օժանդակող մասնագետներից (առնվազն նյութատեխնիկական միջոցներից օգտվելու հմտություններ ունեցող մեկ մասնագետ) կազմված աշխատակազմի առկայության մասին:

12. Հայտն ու կից փաստաթղթերն ընդունում է լիազորված պետական մարմնի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը (այսուհետ՝ ստորաբաժանում) և հայտն ընդունելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է դրանք: Եթե հայտին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն

ամբողջական չէ, ապա ստորաբաժանումը հավակնորդին գրավոր առաջարկում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում համալրել այն:

13. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետում հավակնորդի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու դեպքում հայտը վերադարձվում է:

14. Հայտն ու կից փաստաթղթերի փաթեթն ամբողջական լինելու դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորաբաժանումը զեկուցում է նախարարին հանձնաժողովի նիստ հրավիրելու անհրաժեշտության մասին: Ստորաբաժանման զեկուցմանը հաջորդող աշխատանքային օրվանից հետո նախարարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում է հանձնաժողովի նիստ:

15. Հանձնաժողովը նիստում քննարկում է հայտը և տալիս այն բավարարելու կամ մերժելու մասին եզրակացություն:

16. Հանձնաժողովը հայտը մերժելու մասին տալիս է եզրակացություն, եթե հայտը չի բավարարում սույն կարգի 9-րդ և 11-րդ կետերով սահմանված պահանջները:

17. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված եզրակացությունն ստանալուց հետո ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նախարարի հրամանի նախագիծ՝ հավակնորդի հայտը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ՝ դրան կցելով հայտը, կից ներկայացված փաստաթղթերը և հանձնաժողովի եզրակացությունը:

18. Հրամանի նախագիծը նախարարին ներկայացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարը հանձնաժողովի եզրակացության հիման վրա հրաման է ընդունում կազմակերպությանը վկայական տրամադրելու կամ վկայականի տրամադրումը մերժելու մասին:

4. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

19. Նախարարի հրամանի ստորագրումից հետո ստորաբաժանումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատրաստում է վկայականը և ներկայացնում նախարարի հաստատմանը:

20. Վկայականը նախարարի կողմից հաստատվելուց հետո ստորաբաժանումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում վկայականը գրանցում է հավատարմագրման գրանցամատյանում և այն հանձնում հավակնորդին: Վկայականը տրվում է 5 (հինգ) տարի ժամկետով՝ վերահավատարմագրման հնարավորությամբ:

21. Վկայականի, հավատարմագրման գրանցամատյանի ձևերն ու հավատարմագրման գրանցամատյանի վարման կարգը սահմանում է նախարարը:

22. Վկայականի կորստի կամ վնասվելու դեպքում հավատարմագրման գրանցամատյանի տվյալների հիման վրա երեք աշխատանքային օրվա ընթացքում տրվում է նույն համարով և գործողության ժամկետով նոր վկայական՝ վերին աջ անկյունում «Կրկնօրինակ» նշումով:

23. Նախարարի կողմից հրամանն ընդունվելուց հետո եռօրյա ժամկետում լիազորված պետական մարմինն իր պաշտոնական կայքում տեղադրում է հավատարմագրված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն, որը պետք է ներառի՝

1) կազմակերպության անվանումը.

2) կազմակերպության գտնվելու վայրը.

3) վկայականի համարը, տրամադրման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը.

4) կազմակերպության հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը.

5) կազմակերպության կողմից իրականացվող մշակութային արժեքների փորձաքննության ոլորտները:

5. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

24. Լիազորված պետական մարմինն իրականացնում է մշտադիտարկման աշխատանքներ:

25. Եթե հավատարմագրված կազմակերպությունն իր գործունեության ընթացքում խախտել է սույն կարգի 9-րդ կետի կամ մեկ տարվա ընթացում երկու և ավելի անգամ խախտել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Մշակութային արժեքների արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության անցկացման կարգը և չափորոշիչները հաստատելու մասին» N 630-Ն որոշման պահանջները, ապա մշտադիտարկման արդյունքների հիման վրա լիազորված պետական մարմնի կողմից տրվում է գրավոր նախազգուշացում՝ առաջարկելով քսան աշխատանքային օրվա ընթացքում վերացնել խախտումները:

26. Գրավոր նախազգուշացում ստանալուց հետո հայտնաբերված խախտումը կազմակերպության կողմից քսան աշխատանքային օրվա ընթացքում չվերացվելու դեպքում ստորաբաժանումը դրա մասին գրավոր տեղեկացնում է նախարարին՝ առաջարկելով հրավիրել հանձնաժողովի նիստ՝ վկայականի գործողությունը դադարեցնելու համար:

27. Նախարարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում հրավիրում է հանձնաժողովի նիստ:

28. Հանձնաժողովը նիստում տալիս է վկայականի գործողության դադարեց-ման կամ չդադարեցման մասին եզրակացություն:

29. Հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո ստորաբաժանումը երեք աշխատանքային օրվա ընթացքում նախապատրաստում է նախարարի հրամանի նախագիծ:

30. Նախարարը երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի եզրակացության հիման վրա հրաման է ընդունում կազմակերպությանը տրված վկայականի գործողությունը դադարեցնելու կամ չդադարեցնելու վերաբերյալ:

31.Վկայականի գործողության չդադարեցնելու կամ դադարեցնելու մասին նախարարի հրամանն ստանալուց հետո լիազորված պետական մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում գրությամբ դրա մասին տեղեկացնում է կազմակերպությանը՝ կցելով նախարարի հրամանի պատճենը:

32. Վկայականի գործողությունը դադարեցնելու մասին կազմակերպությանը տեղեկացնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորաբաժանումը հավատարմագրման գրանցամատյանում կատարում է համապատասխան գրառում և հետ վերցնում վկայականը:

6. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԱՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

33. Վկայականի տրամադրումը մերժելու կամ վկայականի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ նախարարի որոշումները կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով կամ դատական կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ